

Թիւ 318
Մայիս 26, 1959

Հոգեշնորհ
Տ. Սուքիաս Մ. Վրդ. ԳալՏայեան
Հոգեւոր Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Ս. Միլվոքի.

Սիրելի Հայր Սուրբ,

Առաջնորդ Սրբազան Հօր հրահանգով այսու Զեզի կը յիշեցնենք,
թէ տակաւին Առաջնորդարան չէք ղրկած Ուեսդ Ալիսի Ծուխին տարեկան
տեղեկագիրը:

Այդ պակասը լրացնելու համար ներիակ դարձեալ Զեզի կը ղրկենք
տեղեկագրի հարցարանին օրինակը, խնդրելով որ բարեհաճիք առաջին պատեհու-
թեամբ զայն լեցնելով վերադարձնել Առաջնորդարան:

Յառաջիկայ Թեմական Պատգամաւորական Ժողովին ներկայացնելիք Թե-
մական Խորհուրդի տեղեկագիրը ամբողջացնելու համար անհրաժեշտ է մեր
տրամադրութեան տակ ունենալ Թեմի բոլոր եկեղեցիներուն տարեկան տեղեկա-
գիրները Յունիս տասէն առաջ:

Ապաւինելով Ձեր գործակցութեան.

Մնամ խորին յարգանքօք

Սուրեն Մանուէլեան
Դիւանապետ

Ս. Միլվոքիի Ծուխին վերաբերեալ նամակը ստացուած է: Առաջ-
նորդ Հայրը զայն պիտի ներկայացնէ Թեմական Խորհուրդի յաջորդ նիստին:
Իսկ Ձեր մասնակի ընտրութեանց վաւերացումը կը յաջորդէ շուտով: